ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«27» 09 2012 թ.

№ 4-1647

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2012 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 02/12.10/12677-12 գրության՝ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև պաշտպանական արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չկան:

Միաժամանակ, Ձեզ ենք ուղարկում նաև համաձայնագրի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր 2 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ի. Գասպարյան

25 10-25247
09.10.12

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև պաշտպանական արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև պաշտպանական արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ նկատառումները.

Համաձայնագրի նախագծի՝

1. նախաբանում «1999 թվականի դեկտեմբերի 7-ին ստորագրված «Ռազմական նշանակության արտադրանքի արտադրության մասնակցություն ունեցող ձեռնարկությունների և կազմակերպությունների մասնագիտական ուղղվածության պահպանման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև համաձայնագրի» վրա» բառերը առաջարկում ենք փոխարինել «1999 թվականի դեկտեմբերի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ «Ռազմական նշանակության արտադրանքի արտադրությանը մասնակցող արտադրական ձեռնարկությունների եւ կազմակերպությունների մասնագիտացումը պահպանելու մասին» համաձայնագրի վրա» բառերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2000 թվականի նոյեմբերի 20-ի Ն-131-2 որոշումը:

2. 4-րդ հոդվածում «2002 թվականի նոյեմբերի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի» համաձայն» բառերը առաջարկում ենք փոխարինել «2002 թվականի նոյեմբերի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» համաձայնագրի համաձայն» բառերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի հունվարի 9-ի ՆՀ-1255-Ն հրամանագիրը :

3. 11-րդ հոդվածում «2009 թվականի դեկտեմբերի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ երրորդ երկրներ ռազմական նշանակության արտադրանքի արտահանման իրականացման փոխգործակցության համաձայնագրին» համապատասխան» բառերը առաջարկում ենք փոխարինել «2009 թվականի դեկտեմբերի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ ռազմական նշանակության արտադրանքը երրորդ երկրներ արտահանելիս փոխգործակցության մասին» համաձայնագրին համապատասխան» բառերով՝ հիմք

ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2010 թվականի մարտի 18-ի ՆՀ-53-Ն հրամանագիրը :

4. 12-րդ հոդվածում «2005 թվականի դեկտեմբերի 2-ի «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող և ստացվող՝ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին»,» բառերը առաջարկում ենք փոխարինել «2005 թվականի դեկտեմբերի 2-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող եւ ստացվող՝ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրին,» բառերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006 թվականի օգոստոսի 14-ի ՆՀ-170-Ն հրամանագիրը :

5. 14-րդ հոդվածում «1994 թվականի մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ պաշտպանության ոլորտի արդյունաբերական կազմակերպությունների միջև արտադրական և գիտատեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագիրը» բառերը առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ պաշտպանության բնագավառի արդյունաբերության ձեռնարկությունների միջև արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին» համաձայնագիրը» բառերով՝ հիմք ընդունելով ՀՀ արտաքին գործերի նախարարության 2002 թվականի հունիսի 2-ի 2002/1 (1) Պաշտոնական տեղեկագիրը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

Ա. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Ղարիբջանյան